



ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԵՐԶԱՆԿԱՀԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ Ս. ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Ա.Ի ՄԱՀԲ,
ՓԱՌԱՇՈՒՔ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԱՂՈՒՄԸ

1952 թվականի հունիսի 21-ին, երկարա-
տե ու ծանր հիվանդությունից հետո, իր
Հայրապետական Աթոռում՝ Անթիլիասում,
վախճանվեց Մեծի Տանն Կիլիկիո Վեհա-
փառ Հայրապետք՝ Գարեգին Ա. Կաթողիկո-
սը:

Սուպէ սև քողը մի անգամ ևս իշակ Կի-
լիկիո Աթոռի վրա այն պահին, երբ ավելի
քան երբեք Կիլիկյան այդ տարագիր Աթոռը
կարեն ուներ Գարեգին Ա. Կաթողիկոսի
նման հայրենասեր և գիտնական մի Հայրա-
պետի:

Վեհափառի մահվան բոթը հեռագործ հա-
զորդվել էր էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայ-
րապետին: Իր հոգեհարազատի մահվան
տիսուր լուրը անշափ վշտացրեց ազգիս
Հայրապետի սիրուր:

Մանր ու անփոխարինելի էր Հայաստան-
յաց Առաքելական Ս. Եկեղեցու կրած մեծ
կորուստը:

Ամենայն Հայոց Հայրապետի հրամանով,
բոթը հեռագործ հաղորդվեց քոյր Եկեղեցի-
ների պետերին և Մայր Հայրենիքի ու
Սփյուռքի բոլոր թեմերին: Նույն օրն իսկ
Մայր Տաճարում կատարվեց հոգեհանգստ-
յան կարգ:

Հայ հավատացյալ ժողովուրդը, Մայր Հայ-
րենիքում թե Սփյուռքում, ողբում էր իր մեծ
ու արժանավոր զավակի մահը, որը իր ողջ
վիտակական կյանքը նվիրել էր իր ժողո-
վորդին, իր Հայրենիքին, հայ արվեստին ու
հայ գրականությանը:

Ամենայն Հայոց Հայրապետի կարգա-
դրությամբ որոշվեց Տ. Վահան արքեպիսկո-
պոսի գլխավորությամբ պատգամավորու-
թյուն ուղարկել Անթիլիաս, թաղման ներկա
լինելու համար:

Վեհափառ Հայրապետը միշտ հետաքրր-
քրվել էր իր հոգեմոր Եղբոր առողջական
վիճակով: 1951 թվականին նա հիվանդ-

տեսի էր ուղարկել գերաշնորհ Տ. Վահան
արքեպիսկոպոսին և պատվարժան պրոֆ.
Աշոտ Աբրահամյանին: Կիլիկիո պատվա-
կան միաբանությունը ոչինչ չի խնայել վեր-
ջին երկու տարում՝ փրկելու համար Գարե-
գին Վեհի կյանքի վերջին թանկագին տարի-
ները:

Բայց պարհուրդ մարդկան, կամք՝ Աս-
տուծոյք:

Անթիլիասի Մայրավանքում, Վեհի վախ-
անման նույն օրը, երեկոյան, մեծ հանդի-
ությամբ Վեհի մարմինը առաջնորդվում է
Կաթողիկոսարին Մայր Տաճարը և Կաթո-
ղիկոսարին ընդհանուր փոխանորդ Տ. Խաղա-
տարքիսկոպոսի հանդիսապետությամբ կա-
տարվում առաջին հոգեհանգստյան կարգը:

Նույն օրը Անթիլիաս է ժամանում Ամե-
նայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ՝
Երուսաղեմի հայոց Պատրիարքական տեղա-
պահ Տ. Եղիշե արքեպիսկոպոսը:

Ամբողջ գիշեր Հանգուցյալի գագաղի վրա
հսկում են Աթոռի միաբաններն ու Դպրե-
լանի ուսանողները, որոնք ամենքից ավել-
ի վշտահար էին իրենց սիրելի Հայրապետի
մահվան պատճառով:


Հետզհետե Մայրավանք են ժամանում
Կիլիկյան թեմերի առաջնորդները, ագքային
պատվրակություններ, մամուկի ներկայա-
ցուցիչներ: Ժամանում է նաև եգիպտահա-
յոց առաջնորդ Տ. Մամրիք արքեպիսկոպո-
սը:

Հունիսի 22-ին, Անթիլիասի Մայր Տաճա-
րում, Տ. Դերենիկ եպիսկոպոսը մատուցում
է հոգեհանգստյան առաջին պատարագը, և
հատուկ դամբանականով, իրոր տեսուշ Դպրե-
լանի հիշում է մեծ Հայրապետի բացա-
սիկ ու հոգածու վերաբերմունքը դեպի Դպր-
քավանքն ու առանձնապես դեպի ժառանգա-
վոր ու սարկագագ ուսանողությունը և ող-

բում Գպրեվանքի և ուսանողության կրած մեծ կորուստը:

Անհամբեր սպասվում է Ամենայն Հայոց Հայրապետի պատվիրակության շուտափուլթ ճամանումին:

Ընդառաջելով հավատացյալ ժողովրդի բուռն ցանկության, որոշվում է հանգուցյալ Վեհի մարմինը ամսի 26-ին փոխադրել Բեյրութի Ս. Նշան առաջնորդանիստ եկեղեցին: Այսուեղ հայ հավատացյալ ժողովուրդը իր



Հուղարկավորության բափորը Բեյրութից դեպի Անրիլիաս

Օրական հայուրավոր ցավակցական հեռագրեր ու նամակներ են հասնում Անթիւաս. հայ ժողովուրդը ողբում է իր անփոխարինելի կորուստը, ամեն տեղ, ամեն մի անկյունում:

Վերջին սրտառուչ հրաժեշտն ու հարգանքն է տալիս Հայաստանյայց Առաքելական եկեղեցու հայրենասեր մեծ Հայրապետին: Ս. Նշան եկեղեցին վերածվում է մի սրբագան ուխտավայրի, որտեղ Վեհի դադաղի առաջ

ծունդ է զնոսմ թեյրութի ողջ հայությունը, մեծով ու փոքրով, երախտազետ զգացմուն- րով, մեծ վշտով:

Հունիսի 28-ը հոչակվում է համազգային սուրբ օր: Փակ են ազգային բոլոր վարժա- րանները, բոլոր արհեստանոցներն ու ինա- նությունները:

Նույն օրը Ս. Նշան եկեղեցում պաշտվում է սովոր պատարագ թագմանազար սուրբ ժողովուրդը լցրել է եկեղեցին, դավիթը, բակը, եկեղեցու շրջակայքը, փողոցը: Պա-

լլրդի հոգու միջով անցնում է սրբազն մի սարսուն...

Որոշ դադարից հետո, ժամը 3-ին, հան- գուցյալ Վեհի դադարը, մեծ շուրջով ու հան- դիսությամբ, բազմահազար ժողովորդի մաս- նակցությամբ, ձեռամբարձ տարվում է դեպի Անթիւսաի Մայրավանքը: Մեծանուն Հայ- րապետի դադարը վերամբարձ տանում են իր հիացողները, աշակերտները, հավատաց- յալները: Կազմվում է հսկա թափոր: Երկու կիլոմետր տարածության վրա, վարար գետի



Վեհի դագաղը տարվում է գերեզման

տարագիշ Մամբրե արքակիսկոպոսը խոսում է հուզիչ դամբանական, Կոստանդնուպոլսու պատրիարքի, հունահայ և եղիպատահայ թե- մերի հայ ժողովորդի զգացմունքների և մեծ վշտի թարգման է հանդիսանում, ովրում է մեծ Հայրապետի մահը, աղոթում է Ամե- նայն Հայոց Հայրապետի թանկագին կյանքի արևատության և Հայաստանյայց Առաքե- լական Եկեղեցու անսասանության համար: Ապա կատարվում է մեծաշուրջ, հանդիսավար հոգեհանգիստ: Վեհի դագաղի շուրջ են իր ձեռնասուն եպիսկոպոսները, վարդապետ- ները, Դարեկվանքի ուսանողությունը: «Ի վե- րին Երուսաղէմ» հոգեզմայլ շարականի հետ, ներկա գտնվող հավատացյալ ժողո-

նման ալեկոծվում է բազմությունը: Թեյրու- թը իր ողջ պատմության ընթացքում ակա- նատես չի եղել հավանաբար մի այսպիսի հակա մարդկային հեղեղի: Թափորի առջևից գնում են ազգային վարժարանների ուսա- նողությունը, ուսուցչա-դաստիարակչական կազմը: Մրանց հետևում են մարմնամար- զական զանազան կազմակերպություններ: Դագաղի առջեկից քայլում է հոգևորական զասը, Խաղաղ արքակիսկոպոսի հանդիսադրու- թյամբ, շրջապատված եղիշե և Մամբրե արքակիսկոպոսներով, եպիսկոպոսներով, վահանաներով: Արեղա- ներից մեկը կրում է Հայրապետական ա- սան՝ սև քողով ծածկված, մի ուրիշը, սև

բարձի վրա՝ հանգուցյալ Վեհի արժանյաց շքանշանները: Վեհի դագաղին անմիջապես հետևում են՝ պաշտոնական անձնավորություններ, ազգային մարմիններ, մամուկի թյուններ, ազգային մարմիններ, պետական, հասարակական կայացածքիներ, պետական, հասարակական դեմքեր: Դագաղին հետևում է մոտ 40.000 սգակիր բազմություն: Նվազախումբը մերթ ընդ մերթ նվազախում է կլասովիկ մահերգներ: Կարգապահության հսկում են 300 երիտասարդներ: Մի պահ քաղաքում կանգ է առնում երթևեկությունը: Ճանապարհին, հայ

են հայկական թաղերի եկեղեցիների սգավոր գանգերը:

Հուզարկավորների թափորը անցնելով Անդր-Նահրի կենտրոնական հայկական մեծ թաղերով, կանգ է առնում Տորախում, որտեղից Վեհի դագաղը հատուկ ավտոմեքենայով, նույն հանդիսությամբ փոխադրվում է Անթիւսի Մայր Տաճարը:

Հուզիլ ու սրտառուչ է նաև այն պահը, երբ թափորը մոտենում է Անթիւսի մուտքին: Տեղացի արար քրիստոնյա ճողովուր-



Հրաժեշտի վերջին պահը Վեհի գերեզմանի առջև

թե օտար, գլուխ են խոնարհում պատկանակով մեծ Հանգուցյալի պայծառ հիշատակի առաջ:

Թերութիւն Անթիւսա հինգ կիլոմետր է և ձանապարհը անցնում է հայկական թաղերի միջութիւնում: Ժամանակ տասնյակ հազարավոր մարդկի, վշտի ժանրության տակ, հետևում են դագաղին, լուս ու թախծուտ: Զեռքերի վրա, նվիրական մասունքի նման, տարվում է Վեհի մարմինը: Ճանապարհին, բոլոր հայ տների պատշգամբները և լուսամուտները ծածկվել են սև շղարշով ու Վեհափառի նկարներով: Բնդհատ ընդհատ, դողանջում

դը, իր գյուղապետի գլխավորությամբ, սպասում է Վեհի դագաղին և ապա մինչև հայոց վանքը տանում է ձեռամբարձ, իր եղբարական խորը հարգանքը արտահայտելով և՛ հայ ժողովրդին և՛ նրա հանգուցյալ Հայրապետին:

Ամսի 29-ին, կիրակի օր, Անթիւսի Մայր Տաճարում կատարվում է Վեհափառի վերջին օժումը: Սրտառուչ էր այն պահը, երբ հանգուցյալ Վեհը տիսուր մեղեղիների և սաղմոսերգությանց միջով, իր վերջին հրաժեշտն էր տալիս իր պաշտած Եկեղեցուն, իր սիրելի հոտին, «Ահա Հրամարիմ ի քէն

Սուրբ Եկեղեցի: Մատուցվում է հանդիսավոր սուրբ պատարագ, որին ներկա էր ոչ միայն հայատացյալների աննախընթաց բազմովթյուն, այլ նաև պետական պաշտոնական ու կղերածան, հոգևոր հրավիրյալներ, կառավարական ներկայացուցիչներ, մինիստրներ, նրեսփոխաններ, գեսապանատների ներկայացուցիչներ: Ներկա էր գտնվում թերութիւնով կատարեց Տ. Զարբե՞ճ եպիսկոպոսը: «Ողջուն»ից առաջ, վերջին օծումը կատարեց Տ. Մամբրի արքեպիսկոպոսը: Դամբանականը խոսեց Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչ և նրուսադեմի հարց Պատրիարքական տեղապահ Տ. Եղիշե արքեպիսկոպոսը իրեն հատուկ պերճախոսությամբ, վեր հանելով Հանգուցյալ Վեհի ազգային-եկեղեցական, գրական, բանասիրական արժանիքները, նրա բերած մեծ ու շնորհընկալ նպաստը հայ կովտուրայի բնդհանուր գանձարանում:

Ժամը 10-ին ոկտիվ պաշտոնական հոգեհանգստային կարգը: Մայր Տաճարը լիբն էր հրավիրյալներով: Վեհ ու տպագորիչ Հանդիսությամբ կատարվեց Հոգեհանգստյան արարողությունը, որի ամբողջ տեղության ընթացքում՝ հրավիրյալները հոտնկալս հարցեցին Վեհի հիշատակը և ապա բարձրանալով Վեհարան, ցալակցություն հայտնեցին Խաղաքակուսին՝ Հայ Եկեղեցու և Հայ ժողովորի մեծ կորստի առթիվ:

Հոգիսի 4-ին անցարային դժվարությունների պատճառով, ուշացումով Անթիւսակ հասավ Ամենայն Հայոց Հայրապետի

պատգամավորությունը, արի կազմի մեջ էին վահան արքեպիսկոպոսը, Ա. Առաքելյանը և Ստ. Անույանը:

Հանգուցյալ Վեհի օծյալ մարմինը հանդշտամ էր Անթիւսակ Մայր Տաճարում:

Հոգիսի 6-ին, կիրակի օրը, ժամը 10-ին, սկսվեց թաղման արարողությունը: Եկեղեցական մեծ թափորով Վեհի դագավազ առաջնորդվեց իր վերջին կայանը, Կիլիկիո վերջին կաթողիկոսների՝ Մահակի և Պետրոսի կողքին, Մայր Տաճարի ու նահատակաց հուշարձանի միջև ընկած տարածության վրա:

Հանգուցյալ Հայրապետի թարմ հողակույտի վրա զամբանականներ խոսեցին Ամենայն Հայոց Հայրապետի ներկայացուցիչներ: Վահան արքեպիսկոպոսը և Ա. Առաքելյանը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի և Մայր Հայրենիքի հավատացյալ հայ ժողովորի:

Մայր Տաճարի տիտուր զանգերի և սաղմոսի կույտանց մելամաղձոտ շեշտերի տակ, թաղմանական արարողությանց վերջին մըրմունքների հետ՝ երանաշնորհ՝ Հայրապետի դագավազը հուշի՝ հուշի՝ կիշեցնում են իր հավիտենական քնարանը...

Այդ օրվանից Անթիւսակ հեռավոր, հյուրներն ափերում, հանգում են հայ ժողովորի մեծ զավակի ու Հայրապետանյաց Առաքելական Եկեղեցու մեծ սպասավորի նշխարները:

«Յիշատակն արդարոց օրինութեամբ եղիցի»:

